ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРЦАХ

МЭРИЯ Г.СТЕПАНАКЕРТА

ք. Ստեփանակերտ, Ն. Ստեփանյան փող., 22 ☎94-37-63 г. Степанакерт, ул. Н. Степаняна, 22
էլ.փոստ՝ Stepmayor@mail.ru

«06» սեպտեմբերի 2018 թ.
N Ա-1814/3
Ձեր N 02-213/18

Արցախի Հանրապետության մարդու իրավունքների
պաշտպան պարոն Ա.Բեգլարյանին

Հարգելի պարոն Բեգլարյան

Ի պատասխան «Հետք» թերթի թղթակից Հայկ Ղազարյանի հարցման վերաբերյալ Ձեր գրության՝ հայտնում ենք, որ վերջինս բանավոր տեղեկացվել էր, որ Ստեփանակերտ քաղաքում ասֆալտապատման աշխատանքներն իրականացվում են Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կողմից, հետևաբար դրա վերաբերյալ տեղեկատվություն Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից հնարավոր չէ տրամադրել:

Ինչ վերաբերում է մանկապարտեզներին՝ հայտնում ենք, որ մինչև 2015 թվականը դրանց ֆինանսավորումն իրականացվում էր պետական բյուջեից՝ կենտրոնացված հաշվապահության միջոցով, իսկ 2016 թվականից՝ կրկին պետական բյուջեից՝ Ստեփանակերտի քաղաքապետարանի միջոցով, որի վերաբերյալ կից տրամադրում ենք հատկացված ֆինանսավորման ծախսերը՝ 2016-ից 2018 թվականի ինը ամսվա կտրվածքի համար: Իսկ ապրանքների ձեռքբերումն ու ծառայությունների մատուցումը մանկապարտեզները, որպես պետական ոչ առևտրային կազմակերպություններ, իրականացնում են ինքնուրույն՝ «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան, հետևաբար ապրանքներ մատակարարող կազմակերպությունների վերաբերյալ միասնական տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Ստեփանակերտի քաղաքապետարանի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները 2012–2017թթ. համար տեղադրված են Ստեփանակերտի քաղաքապետարանի պաշտոնական stepanakert.am կայքէջում:

Առդիր 1 (մեկ) թերթ:

Հարգանքով՝

Ս.Գրիգորյան
Քաղաքապետ

Կատարող՝ Լ.Սիմոնյան
հեռ.94-16-82

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
Մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմ
Մտ. 01-191
«13» սեպտեմբերի 2018 թ.